ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

SCIENTIFIC LIFE

DOI: 10.52837/27382702-2022.1-178

INTERNATIONAL CONFERENCE "ARMENIA-IRAN. HISTORICAL PAST AND THE PRESENT" (dedicated to the 30th anniversary of the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran)

Gohar Iskandaryan

Keywords: Armenia, Iran, International conference, 30th anniversary, NAS RA, Institute of Oriental Studies, Cultural Center of the Embassy of the IRI.

"Armenia-Iran. The Historical Past and Present" international conference took place in the conference hall of the Presidium of the National Academy of Sciences of the Republic of Armenia (NAS RA) on February 9-10, 2022. The conference was dedicated to the 30th anniversary of the establishment of diplomatic relations between the Republic of Armenia and the Islamic Republic of Iran (IRI).

The Institute of Oriental Studies of NAS RA initiated the conference a year ago, circulating the call for proposals. This event is, in fact, a tribute to all the figures who contributed to the establishment and development of the diplomatic relations between Armenia and Iran.

The Cultural Center of the Embassy of the IRI in Armenia, as well as the Chair of Iranian Studies of the Faculty of Oriental Studies of the Yerevan State University (YSU) welcomed the initiative. The State Archives of the Republic of Armenia joined the efforts during the last organizational phase of the conference. Numerous Iranian Studies centers in different countries, including the University of Tehran, the Association of Iranian Studies, The German Oriental Studies Trust, the Caucasus Studies Institute, as well as the Chair of Iranian Studies of the Faculty of Oriental studies of YSU, quicky took up the announcement and shared on their social media pages. As a result, the organizing committee of the Conference received more than 50 applications from Iran, Lebanon, the United States, Pakistan, and Armenia. The organizing committee reviewed the materials and extended the invitation to participate in the conference to 35 scholars.

The conference consisted of five sessions. Message greetings by the Catholicos Karekin II, the Minister of Foreign Affairs of RA Ararat Mirzoyan, the Minister of Foreign Affairs of IRI Hossein Amir Abdullahian were first read for the participants. The President of NAS RA Ashot Saghyan highly appreciated the organization of a conference on Armenia-Iran diplomatic relations and pointed out that deepening of the ties should be kept in the center of attention. The Academician-Secretary of the Division of Armenology and Social Sciences Y. Suvaryan recalled Iran's support for Armenia during the tough times in 1990s. The two members of the 11th convocation of the Iran Parliament, A. Shahverdyan and R. Beglaryan,

took part in the two-day work of the conference. In his speech, Robert Beglaryan stated that in parallel with the developed political relations, there is a need to make a focus on economic and security aspects in the bilateral relations. Director of the Institute of Oriental Studies of NAS RA R. Ghazaryan noted that the manifold relations between the states have a centuries-long history, and a solid, well-established basis, forged in the fires of civilization, hence this relationship only need to be nurtured and strengthened. The director of the Institute of History of the NAS RA A. Melkonyan in his speech emphasized that unlike other regional powers, Iran from time to time showed a distinctly friendly attitude towards Armenia. V. Voskanyan, the Chair of Iranian Studies at YSU Department of Oriental studies, drew the attention to the fact that the Armenian-Iranian border with its historical changes is in fact one of the oldest borders in the world, and is the security guarantee of the two countries. The session was concluded with the speeches by the director of the National Archives of Armenia G. Arshakyan, the Counselor of the Cultural Center of the Embassy of the IRI in Armenia Seyyed Hossein Tabatabayi; and the Secretary of the Organizing Committee G. Iskandaryan, who presented the entire process of organizing the conference.

The third part of the conference was dedicated to the problems and mechanisms of overcoming the problems existing during the tenure of the former ambassadors, which, we believe, is one of the best ways to pass on institutional memory and experience to future generations. The ambassadors of RA to Iran V. Bayburdyan, G. Gharibjanyan, G. Arakelyan, A. Avagyan presented their reports. Bahman Ghasem, Ali Saghayan, Mohammad Rays, Seyed Kazem Sajadi, Abbas Badakhshan Zohuri spoke from the Iranian side. As a result of cooperation with the National Archives of the Republic of Armenia, the conference featured an exhibition presenting the entire database of documents signed between Armenia and Iran since 1918.

The fourth part of the conference was dedicated to the academic reports. The reports posed serious questions to the current developments in the Armenian-Iranian political relations and the existing problems. Member of the Academy R. Safrastyan, head of the department of Iranian Studies of the Institute of Oriental Studies G. Iskandaryan, Seyed Abbas Ahmadi from Tehran University, research fellow at the Institute of Oriental Studies A. Israelyan, Parvin Pour-Mohammadian from the Islamic Free University of Iran, research fellow at the Institute of History K. Mkrtchyan, Hadi Ajili from Alameh Tabatabai University in Tehran, Yeghia Tashjian from the American University of Beirut, Ali Ali Baba Darman from Tehran University presented remarkable reports.

The next day of the conference, on February 10, the conference organizers held simultaneously two sessions. While one session focused on culture, philology and archaeology (presenters: G. Gevorgyan, YSU; N. Yeranyan, Institute of Archaeology and Ethnography; A. Babayan, the National Association of the Armenian Studies and Research (NAASR), USA; Shohre Sadat Sajjadi, Alameh Tabatabа University of Iran; H. Hmayakyan, the Institute of Oriental Studies; T. Mikael-

yan, the Institute of Oriental Studies; A. Yahya Masihin, Institute of Literature; and A. Bagratyan, the Institute of Literature) , the parallel session was entirely devoted to the issues of history (presenters: K. Kostikyan, the Institute of Oriental studies; H. Khorikyan, Shirak State University; Kh. Stepanyan, Armenian State Pedagogical University; Ivet Tajaryan, YSU; A. Tonoyan, the Institute of Oriental studies; G. Misakyan, YSU; L. Petrosyan, YSU; and A. Margaryan, YSU.

On February 10, the organizing committee summed up the results of the two-day international conference and awarded the participants with certificates.

As a matter of fact, the Institute of Oriental studies of NAS RA successfully united the scholars in Iranian Studies, hence as a follow up, the organizing committee decided to publish the materials of the conference in a separate volume.

The conference was widely covered both in the Armenian and Iranian media.

The conference also had a cultural component, the guests visited the Matenadaran - Research Institute of Ancient Manuscripts and enjoyed the concert of the State Symphony Orchestra of Armenia in the "Aram Khachaturian" concert hall.

Simultaneous translation of the conference was funded by the Science Committee of RA.

Gohar Iskandaryan
Institute of Oriental Studies of NAS RA
iskandaryan@sci.am

ORCID ID 0000-0001-9580-1318

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ «ՀԱՅԱՍՏԱՆ-ԻՐԱՆ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԸ ԵՎ ՆԵՐԿԱՆ» (նվիրված Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին)

Գոհար Իսկանդարյան

Բանալի բառեր՝ Հայաստան, Իրան, միջազգային գիտաժողով, 30-ամյակ, ՀՀ ԳԱԱ, Արևելագիտության ինստիտուտ, ԻԻՀ դեսպանատան մշակութային կենտրոն:

2022 թ. փետրվարի 9-10 ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ միջազգային գիտաժողով «Հայաստան-Իրան. պատմական անցյալը և ներկան» խորագրով, որը նվիրված էր Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության

միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակին:

Հայտարարությունը տարածվել էր մեկ տարի առաջ գիտաժողովը նախաձեռնած՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից, ինչը, ըստ էության, հարգանքի տուրք է Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը և կայացմանը նպաստած բոլոր գործիչներին:

Առաջարկը ոգևորությամբ ընդունվեց ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանատան մշակույթի կենտրոնի, ինչպես նաև ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի կողմից: Գիտաժողովի կազմակերպչական աշխատանքներին իր մասնակցությունը ցուցաբերեց նաև ՀՀ Ազգային արխիվը: Հայտարարությանն արագորեն արձագանքեցին աշխարհի իրանագիտական կենտրոնները՝ տարածելով իրենց էջում, այդ թվում Univeristy of Tehran, Association of Iranian Studies, The German Oriental Studies Trust, Caucasus Studies Institute, ինչպես նաև ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնը և այլք: Արդյունքում Գիտաժողովի կազմկոմիտեն ստացավ 50-ից ավել հայտ՝ Իրանից, Լիբանանից, ԱՄՆ-ից, Պակիստանից, Հայաստանից: Նյութերին ծանոթանալուց հետո մասնակցության հրավեր ստացան 35 գիտնականներ:

Գիտաժողովը բաղկացած էր 5 մասից. ողջույնի ուղերձներ հնչեցին ՆՍՕՏՏ Գարեգին Բ. Ամենայն հայոց կաթողիկոսի, ՀՀ ԱԳՆ Արարատ Միրզոյանի, ԻԻՀ ԱԳՆ Հոսսեյն Ամիր Աբդոլլահիանի անունից: Ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ նախագահ Աշոտ Սաղյանը, ով կարևորեց Հայաստան-Իրան դիվանագիտական հարաբերություններին նվիրված գիտաժողովի կազմակերպումը, միևնույն ժամանակ արձանագրելով, որ հետևողականորեն պետք է ուշադրություն կենտրոնում պահել կապերի խորացումը: Ուշագրավ ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը, ով հիշեցրեց 1990-ական թվականների ծանր օրերին Իրանի կողմից Հայաստանին ցուցաբերվող աջակցության մասին:

Գիտաժողովի երկօրյա աշխատանքներին մասնակցեցին նաև Իրանի Իսլամական Հանրապետության 11-րդ գումարման մեջլիսի երկու պատգամավորները՝ Ա. Շահվերդյանը և Ռ. Բեգլարյանը: Ռոբերտ Բեգլարյանը իր ելույթում արձանագրեց, որ երկու երկրների միջև զարգացած քաղաքական հարաբերություններին զուգահեռ անհրաժեշտություն

կա մեր երկկողմ հարաբերություններում անցում կատարել տնտեսական և անվտանգային հարաբերությունների խորացմանը: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը իր խոսքում նշեց, որ երկու պետությունների միջև փոխառնչությունները տարբեր մակարդակների վրա ունեն դարերի պատմություն և ունեն ամուր, կայացած հիմքեր, քանի որ դրանք թրծվել են քաղաքակրթական մակարդակի վրա և հարկավոր է միայն շարունակել և էլ ավելի ամրապնդել այդ կապերը: Ելույթով հանդես եկավ նաև ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ով իր ելույթում ընդգծեց, որ ի տարբերություն տարածաշրջանային այլ տերությունների, Իրանը Հայոց պետականության նկատմամբ ընդգծված բարյացակամ վերաբերմունք է ունեցել: ՀՀ ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ Վարդան Ոսկանյանը ներկաների ուշադրությունը բևեռեց այն հանգամանքի վրա, որ Հայաստան-Իրան սահմանը, պատմական փոփոխութուններով հանդերձ, ըստ էության տարածաշրջանի անփոփոխ պետական սահմաններից մեկն է, որն երկու երկրների անվտանգության ապահովման գրավականն է: Հաջորդիվ ելույթով հանդես եկավ Հայաստանի ազգային արխիվի տնօրեն Գրիգոր Արշակյանը, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյյեդ Հոսեյն Թաբաթաբային և գիտաժողովի կազմկոմիտեի քարտուղար Գոհար Իսկանդարյանը, ով ներկայացրեց գիտաժողովի ողջ կազմակերպման ընթացքը:

Գիտաժողովի երրորդ մասը նվիրված էր ՀՀ-ում և ԻԻՀ-ում նախկին և ներկա դեսպանների պաշտոնավարման շրջանում առկա խնդիրներին և հաղթահարման մեխանիզմներին, ինչը, կարծում ենք, ինստիտուցիոնալ հիշողությունը և փորձը հետագա սերունդներին փոխանցելու լավագույն ձևերից մեկն է: Զեկույցներով հանդես եկան ԻԻՀ-ում ՀՀ դեսպաններ Վահան Բայբուրդյանը, Գևորգ Ղարիբջանյանը, Գրիգոր Առաքելյանը, Արսեն Ավագյանը: Իրանական կողմից հանդես եկան Բահման Ղասեմին, Ալի Սաղայիանը, Մոհամմադ Ռայիսին, Սեյյեդ Քազեմ Սաջադին, Աբբաս Բադախշան Զոհուրին:

ՀՀ ազգային արխիվի հետ համագործակցության արդյունքում կազմակերպվել էր նաև ցուցադրություն, որտեղ ներկայացված էր 1918 թվականից մինչ օրս առկա Հայաստանի և Իրանի միջև կնքված փաստաթղթերի ողջ շտեմարանը:

Գիտաժողովի չորրորդ մասը նվիրված էր գիտական զեկույցներին: Նշանակալից է այն փաստը, որ ամենալուրջ հարցադրումներով ներկայացվեցին հայ-իրանական քաղաքական հարաբերությունների այսօրվա

զարգացումները և առկա խնդիրները: Ուշագրավ զեկույցներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռուբեն Սաֆրաստյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Իրանի բաժնի վարիչ Գոհար Իսկանդարյանը, Թեհրանի համալսարանից Սեյեդ Աբբաս Ահմադին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտաշխատող Արմեն Իսրայելյանը, Իրանի Իսլամական Ազատ համալսարանից Փարվին Փուր-Մոհամմադիանը, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող Կարեն Մկրտչյանը, Թեհրանի Ալամե Թաբաթաբայիի անվան համալսարանից Հադի Աջիլին, Եղիա Թաշճյանը՝ Բեյրութի Ամերիկյան համալսարանից, Ալի Ալի Բաբայի Դարմանին՝ Թեհրանի համալսարանից:

Գիտաժողովի հաջորդ օրը՝ փետրվարի 10-ին գիտաժողովը համաժամանակյա ընթանում էր երկու նիստով. առաջին նիստում, որը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, բանախոսները ներկայացրեցին մշակույթի, բանասիրության, հնագիտության ոլորտի խնդիրները: Ելույթով հանդես եկան Գառնիկ Գևորգյանը ԵՊՀ-ից, Նժդեհ Երանյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտից, Անի Բաբայեանը ԱՄՆ-ի Համազգային հայագիտական միությունից, Շոհրե Սադաթ Սաջջադին Իրանի Ալամեհ Թաբաթաբայի համալսարանից, Հասմիկ Հմայակյանը և Տիգրան Միքայելյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից, Անահիտ Յահյամասիհին և Արեգ Բագրատյանը ՀՀ ԳԱԱ գրականության ինստիտուտից:

Երրորդ նիստը, որը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում, ամբողջովին նվիրված էր պատմության հարցերին, որտեղ զեկուցմամբ հանդես եկան Քրիստինե Կոստիկյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից, Հովհաննես Խորիկյանը Շիրակի պետական համալսարանից, Խաչիկ Ստեփանյանը Հայկական պետական մանկավարժական համալսարանից, Իվեթ Թաջարյանը ԵՊՀ-ից, Արտյոմ Տոնոյանը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտից, Գարիկ Միսակյանը, Լիաննա Պետրոսյանը և Անի Մարգարյանը ԵՊՀ-ից:

Փետրվարի 10-ին ամփոփվեցին երկօրյա միջազգային գիտաժողովի արդյունքները, մասնակիցներին տրվեցին հավաստագրեր:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը փաստացի հաջողությամբ համախմբեց Հայաստանում գործող իրանագիտական միտքը և որպես ամփոփում կազմկոմիտեն որոշեց գիտաժողովի նյութերը հրապարակել մեկ ժողովածուի տեսքով:

Գիտաժողովը մեծապես լուսաբանվեց հայկական ու իրանական զանգվածային լրատվականներում:

Գիտաժողովը ուներ նաև մշակութային բաղադրիչ, հյուրերն այցելեցին Մատենադարան, իսկ երեկոյան՝ «Արամ Խաչատրյան» համերգասրահում ունկնդրեցին Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի համերգը:

Գիտաժողովի համաժամանակյա թարգմանությունը իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ: